ԲԱԶՄԱՎԷՊ

1934

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԱԶՆԻՒ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Նկատելով ՏՈՂԱՐԻ *և* ՍԹԵՐԼԻՆԻ *անկայուն վիճակը, հարկ կը համարինք բաժնեգիններու հատուցման հիմ ծառայեցնել Իտալական և Զուիցերական դրամները՝ որոնք համեմատական կայունութիւն մը կը ցուցնեն՝ գէթ առ այժմ։*

Որով այսուհետեւ, թէ՛ անոնք որ անցեալ տարիներու հաշիւները պիտի կարգադրեն և թէ անոնք որ նոր պիտի արձանագրուին, կը խնդրենք որ հաճին վճարել որպէս տարեկան բաժնեգին՝ 60 *Լիրէ Իտալական և կամ* 16 *Ֆր. Զուիցերական։ Փոխարժէքը կ'ընդունինք իւրաքանչիւր երկրի դրամով՝ օրուան սակին համեմատ։*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՎԵՆԵՏԻԿ

ԱՐԱԳ ԵՒ ԱՆԹԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱՏԶԵԼԻ ԳԻՆԵՐ

Տպարանս կը ստանձնէ ամէն տեսակ հրատարակութիւն Հայ և Եւրոպական լեզուներով, ինչպէս նաեւ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ – ՆԱՄԱԿԱՆԻ – ՆԱՄԱԿԱՌԱՐ – ՔԱՐՏԵՐ՝ ԳՈՒՆԱՏԻՊ ԵՒ ՊԱՐԶ – ԱՑՑԵՏՈՄՍԵՐ – ՊԻՏԱԿՆԵՐ և այլն, և այլն։

IMPRIMERIE ARMÉNIENNE
St. Lazare VENISE (Italie)

ՅՈՒՆՈՒԱՐ ԹԻՒ 1

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1934

ՀԱՏ. Ղ.Բ. ՌԵՁԳ-ՌԵՁԳ

ՎԵՆԵՏԻԿ Ս. Ղ.ԱԶԱՐ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Եւ Ա՛ՅՆՔԱՆ *սրտագին է մեր մաղթանքը բոլոր մեր ազնիւ ընթերցողներուն, բոլոր մեր հեռաւոր սիրելի եղբայրներուն՝ որքան դառն ու կսկծագին է այսօր անոնց վիշտը և ոգետանջ անոնց անդոհը՝ ահաւոր և սրբապիղծ եղեռնի վաղորդայնին։*

Երբ ամբողջ տիեզերքի մէջ հնչելու վրայ էր կեանքի և փրկութեան մեծ պատգամը, հազար իննհարիւր երեսուն և երեք անգամ կրկնուած յուզումով, սիրով ու բերկրանքով, երբ աւետիսը պիտի ընթանար խաղաղութեան և Սիրոյ Արարչին Ծննդեան՝ Աստուծոյ տաճարէն, Աստուծոյ պաշտօնէին բերնով՝ որ բազկատարած գթութիւն, սէր, խաղաղութիւն պիտի հայցէր Երկնքէն իր տառապակոծ հայ հօտին համար, ահա լոյսի տեղ խաւար, հրեշտակներու տեղ անողորմ ու դիւաբախ ոգիներ, կեանքի տեղ մահ և արիւն. և ահաւոր եղեռնը կու տայ մեր հայ եղբայրներուն մէջ խռովքի, ցաւի և կսկիծի դժոխալուր արձագանգը։

Որպիսի՜ տօն, որպիսի՜ պատկեր... Թշուառ ժողովուրդ։

Ահա մեր ցաւն ալ, մեր կսկիծն ալ խառնուած հասարակաց մեծ սուգին, և մենք յանուն ամբողջ մեր նահատակ եղբայրներուն՝ որոնց արեան հետ կը խառնուի եղերաբախտ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանինն ալ՝ կը հայցենք Երկնքի գութը, Երկնքի օրհնութիւնը ամենուն համար, ամենուն համար խաղաղութիւն, ամենուն համար սէր և մխիթարութիւն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

digitised by A.R.A.R.@